

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 2014Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2014թ. տարեկան ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից 2014թ. առաջին եռամսյակում նախատեսվել և իրականացվել է թվով 21 համակարգի գնահատման աուդիտ, այդ թվում՝ 3 քաղաքային համայնքներում /Ախթալա, Թումանյան և Շամլուղ/, ինչպես նաև 18 մարզային ենթակայության ՊՈԱԿ-ներում /Վանաձորի թիվ 16, 18, 19, 20, 21, 23, 25, 26, 27 և 28, Ալավերդու թիվ 4, 7, 10,11 և 12, Թումանյանի, Հաղպատի և Ճոճկանի դպրոցներ/:

Նշված քաղաքապետարաններում և ՊՈԱԿ-ներում ներքին աուդիտի ստանդարտների համաձայն, այդ թվում բավարար փաստաթղթային տեղեկությունների հիման վրա փաստացի իրականացվել է աուդիտ և կազմվել աուդիտի հաշվետվություն: Հաշվետվությունները ներառել են աուդիտի ընդհանուր նկարագիրը, գտնվելու վայրը, գործունեության իրավական հիմքերը, գործունեության շրջանակները, խնդիրները, աուդիտի արդյունքները, եզրահանգումները, առաջարկությունները, հանձնարարականները: Իրականացվել են ֆինանսական հաշվետվություններում, ֆինանսական բնույթի տեղեկություններում և հաշվապահական հաշվառման գրանցումներում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում: Աուդիտի ընթացքում աուդիտի են ենթարկվել ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանը առնչվող բոլոր գործառույթները:

Հրավիրվել է մարզպետարանի Ներքին աուդիտի կոմիտեի մեկ նիստ և քննարկվել աուդիտի հաշվետվությունները, որի արդյունքում կայացվել են համապատասխան որոշում, որի հիման վրա համայնքի ղեկավարներին և ՊՈԱԿ-ների տնօրեններին տրվել են համապատասխան հանձնարարականներ և ժամկետներ՝ արձանագրված խախտումների և թերությունների վերացման նպատակով, իսկ «Ալավերդու թիվ 7 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենին հայտարարվել է գրավոր նկատողություն:

Բաժնի կողմից Թումանյանի տարածաշրջանի կրթական հաստատությունների ղեկավարների և հաշվապահների մասնակցությամբ կատարված աուդիտի հիմքով կազմակերպվել է խորհրդակցություն, որի ընթացքում վերհանված թերությունների և խախտումների շտկելու և հետագայում բացառելու ուղղությամբ տրվել են համապատասխան հանձնարարականներ: Իսկ Ներքին աուդիտի բաժնի կողմից պարբերաբար ցուցաբերվել և կցուցաբերվեն

մեթոդական օգնություն, իսկ օրենսդրական փոփոխությունների մասին իրազեկվել է:

Ներքին աուդիտի բաժնի կողմից ամբողջությամբ կատարվել է 2014թ. առաջին եռամսյակի ծրագիրը, իսկ հաշվետվությունները ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. թիվ 143-Ն հրամանի համաձայն՝ ծրագրային մուտքագրմամբ ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն: Միաժամանակ այդ աշխատանքները իրականացվել են Ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով և գնահատվել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից: Մոնիթորինգի արդյունքում թերություններ չեն հայտնաբերվել:

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

Լ.ԲԵՐՈՅԱՆ